ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի կատարումն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հունիսի 20-ի № 902--Ա հրամանի՝ որպես նախարարության ներկայացուցիչ, սույն թվականի հունիսի 21-ին մասնակցել եմ «Երևանի Ա.Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթին:

Մրցույթին ներկա էին կառավարման խորհրդի 9 անդամներից 8-ը:

Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթին մասնակցում էր մեկ հավակնորդ՝ Դիանա Մինասյանը:

Դիանա Մինասյանը հակիրճ ներյկայացրեց տվյալ հաստատության զարգացման ծրագիրը և պատասխանեց խորհրդի անդամների տրված հարցերին:

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների՝ մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից ընտրված թեկնածուն Դիանա Մինասյանն էր: Այնուհետև տեղի ունեցավ բաց քվեարկություն, որի արդյունքում ձայները բաշխվեցին՝ 3 «կողմ», 1 «ձեռնպահ»: Ընդհանուր արդյունքում՝ 7 «կողմ» ձայն:

Խորհրդի նախագահը քվեարկության արդյունքներն ափոփելուց հետո, մինչև նիստի ավարտը, հավակնորդի ներկայությամբ հրապարակեց քվեարկության արդյունքները և հայտարարեց, որ բաց քվեարկության արդյունքում «Երևանի Ա.Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հաղթող ճանաչվեց Դիանա Մինասյանը և 7 «կողմ» ձայնով ընտրվեց տնօրեն:

«Երևանի Ա.Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացվեց ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջներին համապատասխան:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարության ներկայացուցիչ՝ ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ
21.06.2022թ.